



- ▷ Վաղ մանկության և կլիմայի փոփոխության ծրագրերի համապատասխանեցումը կարող է բարձրացնել ն մեկի, և մյուսի արդյունավետությունը:
- ▷ Ուսումնասիրությունները, որոնք ի հայտ են բերում կլիմայական փոփոխությունների հետևանքների մեջմացման դրական ազդեցությունը առողջության վրա, կարող են նախադեպ հանդիսանալ:
- ▷ Հնարավոր կլինի կապեր ստեղծել օդի աղտոտման, քաղաքային կանաչապատման և տրանսպորտի վերաբերյալ քաղաքականությունների միջև:



Photo: sushytska/Adobe Stock

ԿԼԻՄԱՋԱԿԱՆ ՎԻՌԱՋԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և Վաղ մանկության վարգացումը. գտնել լավագույն համադրությունը

Կառլիս Դոռա

Առողջապահական համաշխարհային
կազմակերպության հանրային առողջության
և շրջակա միջավայրի բաժնի
նախկին համակարգող

Այսօր ծնված երեխաներն ամենայն
հավանականությամբ կապրեն մինչև 2100
թվականը, երբ ջերմոցային գավերի
արտանետումների այսօրվա քանակի հաշվարկով՝
որի ջերմաստիճանը կբարձրանա գրեթե 4 C-ով
(Կոլլինս և այլք, 2013), ծովի մակարդակի
բարձրացման հետևանքով ափամերձ
տարածքները կծածկվեն ջրով, իսկ եղանակի
կտրուկ փոփոխությունները բացասականորեն
կապդեն գյուղատնտեսական արտադրանքի և ջրի
պաշարների վրա: Վաղ մանկության վարգացման
ցանկացած օրակարգը պետք է նպատակ ունենա
սահմանափակել կլիմայական փոփոխությունների
հնարավոր ավեցությունները երեխաների
ամբողջ կյանքի ընթացքում: Բայց կարո՞ղ են
արդյոք կլիմայակական փոփոխությունների
մեղմացման հետ կապված ծրագրերը
դրականորեն ավելի նաև վաղ մանկության
վարգացման ծրագրերի վրա:

Մենք հավատում ենք, որ դա ինարավոր է, բայց անհրաժեշտ է հստակեցնել կլիմայի փոփոխությունների և երեխայի խնամքի ու զարգացման քաղաքականությունների միջև եղած ընդհանուր միտումները կապերը, առևտություններն ու պատճառահետևանքային կապերը. պլանավորել, փաստաթղթեր կազմել, անհրաժեշտության դեպքում նաև հտապոտություններ իրականացնել:

Որպես օրինակ կարող ենք դիտարկել փաստերն այն մասին, թե ինչ դեր են խաղում քաղաքաշինությունը և ֆիզիկական միջավայրը երեխայի զարգացման վրա սկսած զբոսայգիների և խաղային տարածքների առկայությունից մինչև՝ թե ինչպես են երեխաներն ու նրանց խնամատարները հասնում նախադպրոցական հաստատություններ և առողջապահական կենտրոններ (Բրաուն և այլք, 2019):

Սա կապվում է նաև այն խնդրին, թե ինչպես է կլիմայական փոփոխություններին հարմարվելու և հետևանքների մեղմացման քաղաքականությունն առնչվում այնպիսի հարցերի, ինչպիսիք են հողօգտագործման պլանավորումը, էկոլոգիապես մաքուր էներգիայի օգտագործումն ու անխափան տրանսպորտը, քաղաքների կանաչապատումը, շինությունների էներգաարդյունավետությունն ու օդափոխումը:

«Այլ կերպ ասած ավելի հարուստ երկրները, պաշտպանելով այսօր փոքր երեխաների շահերը, ձախողում են նրանց ապագայի պաշտպանությունը»:

Օդի աղտոտումը, որն ապդրում է երեխաների իմացական և ֆիզիկական զարգացման վրա, ակնհայտորեն կապված է կլիմայի փոփոխության հետ: Օդի աղտոտման աղբյուրներն ընդհանուր առմամբ նույնն են, ինչ շերմնացային գավերինը, բայց այս դեպքում քաղաքացիները կարող են հեշտությամբ չափել այն և հաշվետվություն պահանջել տեղական ինքնակառավարման մարմիններից: Պոտենցիալ կապ կա նաև երեխաների վաղ զարգացման և կլիմայական փոփոխությունների արդյունքում առաջացնել այնպիսի ծայրահեղ եղանակային երևույթները միջև, ինչպիսիք են երաշտները, ջրհեղեղները, անտառային հրդեհները, շոգը, ինչպես նաև խնձեկցիոն և վարակիչ հիվանդությունների մոդիֆիկացիաները, սննդի և ջրի հասանելիությունը:

Կլիմայի փոփոխության և վաղ մանկության զարգացման խնդիրները միմյանց հետ կապելու հետագա աշխատանքը հիմնվելու է երկու կարևոր վերլուծությունների վրա:
Առաջինը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերազանցության մասին՝ կապված է (OHCHR, 2018), որը լայն շրջանակ է ենթադրում՝ ոլորտի քաղաքական որոշումները նաև երեխայի իրավունքների տեսանկյունից դիտարկելու համար:

Երկրորդ՝ Լանսեթի Հանձնաժողովի վեկույցն է աշխարհի երեխաների ապագայի վերաբերյալ (Քարել և այլք, 2020թ.): Այս վեկույցը ցույց է տալիս, որ բացակայում է կապը կլիմայի փոփոխության մեղմացմանն ուղղված աշխատանքների և երեխաների խնամքի ու դաստիարակության մակարդակի միջև: Օրինակ, ավելի հարուստ երկրները լավ արդյունքներ ունեն ըստ համակցված «Բարորության ինդեքսի», բայց ավելի վատ՝ CO_2 -ի արտանետումները նվազեցնելու պարտավորությունների հարցում:

Այս օրակարգը զարգացնելու համար անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել այս վերլուծությունները և այնպիսի ուղիներ գտնել, որոնք հնարավոր կղարձնեն այս հարցերին առնչվող քաղաքականության մշակման մեջ ներգրավել շահագրգիռ կողմերի լայն շրջանակների: Դիտարկենք միայն մեկ օրինակ. կլիմայի փոփոխության և վաղ մանկության զարգացման փոխակապակցված օրակարգը կարող է ավելի ծանրակշիռ դարձնել հանածո վառելիքի համար տրվող դրսացիաների դադարեցման քաղաքականությունը:

Կլիմայի փոփոխությունները և առողջապահությունը

Կլիմայի փոփոխության խնդիրը մեկ այլ ոլորտի հետ կապելու նախադեպ արդեն կա, որը դրական ապդեցություն է թողնում երկու կողմերի վրա էլ. առողջապահության և կլիմայի հետ կապված քննարկումների համատեղում՝ մասնավորապես ոչ վարակիչ հիվանդությունների խնդրի տեսանկյունից:

Այս քննարկումների և ներկայացվող փաստերի զարգացումը կարելի է դիտարկել կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնաժողովի (IPCC) վեկույցների միջոցով:
Առաջին վեկույցում (1991թ.) առողջապահության ոլորտն ընդհանրապես չեղ ընդգրկվել:

Երկրորդ վեկույցը վերաբերում էր առողջության վրա կլիմայի փոփոխությունների շոգի և ծայրահետ եղանակային դրսևորումների անմիջական ապդեցությանը: Երրորդ վեկույցում ավելացան առողջության վրա կլիմայի փոփոխությունների անուղղակի ապդեցության հարցերը, հիվանդությունների տարածումը մոծակների միջոցով, ջրի որակը, օդի որակը, սննդի որակը և քանակը: Չորրորդ վեկույցում (2007 թ.) ավելացավ առողջության խոցելիությունը և հարմարվողականությունը:

Այսուամենայնիվ, կլիմայի հարցերով վրապող շրջանակներում անհամաձայնություն կար առողջապահությունը կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման հարցերի հետ կապելու հարցում: Մասնավորապես, ոչ վարակիչ հիվանդությունները, ինչպիսիք են սրտային հիվանդությունները, ինսուլտը և քաղցկեղը, հիմնականում դիտարկվում էին որպես կլիմայի փոփոխության հետ կապ չունեցող, իսկ որպես դրանց կանխարգելման ուղիներ դիտարկվում էին միայն դիետան, ծիմելու սովորության կամ ֆիզիկական ակտիվության փոփոխությունը: Բայց համաձայնեցված աշխատանքների արդյունքում հնարավոր եղավ վերլուծել փաստերը և բացահայտել, թե ինչպես կարող է կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման քաղաքականությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տրանսպորտը, էներգետիկան, գյուղատնտեսությունը և թափունների կառավարումը, կանխել ոչ վարակիչ հիվանդությունները, ինչը հնարավորություն տվեց կապ հաստատել հիվանդությունների և կլիմայի հետ կապված գործունեության միջև:

Արդյունքում, հինգերորդ վեկույցն արդեն (2014 թ.) ներառում էր այն հարցը, թե կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման ուղղված գործունեությունն ինչպես է նպաստում մարդկանց առողջությանը (Սմիթ և այլք, 2014): Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) ուսումնասիրեց մի շարք փաստեր և ամրապնդեց այս մոտեցումը ընդգծելով, թե ինչ դրական ապդեցություն են ունենում կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանն ուղղված գործողություններն առողջության վրա, ինչպես նաև գյությունն ունեցող ոլորտը (ԱՀԿ, 2011, 2012): Այդ ուսումնասիրությունների նպատակն էր՝ պարզել, թե կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման որ գործողություններն են առավել նպաստավոր առողջության համար, ինչպես նաև՝ թե որ գործողություններն են ավելի ռիսկային առողջության համար, օրինակ՝ դիվելային շարժիչների օգտագործման խրախոսները, որոնք ավելի քիչ քանակությամբ շերմոցային գավեր են արտանետում, բայց, այսուամենայնիվ, վկասում են առողջությանը, թե՛ բենվիճային շարժիչները:

Լանսեթի ուսումնասիրությունների շարքն օգնեց «Նպաստավոր գործուներ առողջության համար» տերմինի ամբողջական ընկալումը կապել կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման և դրանց հարմարվելու գործողությունների հետ (Կոստելլո և այլք, 2009): Կլիմայի և առողջության վերաբերյալ «Լանսեթի հետհաշվարկ» վեկույցը, որը 2017 թվականից ի վեր ամեն տարի հրատարակվում է (Վաթս և այլք, 2017), ներառում է նաև այլ ցուցանիշներ այն մասին, թե, բացի արդեն հաստատված փաստերից (վարակիչ հիվանդությունների ուղիղ կապը եղանակային կարորվ փոփոխությունների հետ), մի շարք այլ ոլորտներում կլիմայի փոփոխությունն ինչպես է կապվում ոչ վարակիչ հիվանդությունների հետ:

ՀԵՏԱՎՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Այսուամենայնիվ, ոչ «Լանսեթի հետհաշվարկը», ոչ էլ կլիմայի փոփոխության միջկառավարական հանձնաժողովի (IPCC) վերջին առողջապահական վեկույցը որևէ կերպ չեն հիշատակում վաղ մասնկության վարգացման խնդիրները: Պատկերը նոյնին է շատ այլ կառույցներում, որոնք քննարկումներ են վարում առողջապահության և կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման հետ կապված գործողությունների վերաբերյալ: Գիտելիքների առկա բացը հաղթահարելու համար երեք տեսակ հետապոտություններ են անհրաժեշտ:

Կլիմայի փոփոխության խնդիրը մեկ այլ ոլորտի հետ կապելու նախադեպ արդեն կա, որը դրական ապդեցություն է թողնում երկու կողմերի վրա էլ. առողջապահության և կլիմայի հետ կապված քննարկումների համատեղում՝ մասնավորապես ոչ վարակիչ հիվանդությունների խնդրի տեսանկյունից:

- 1 Հետապոտություններ ծննդից մինչև 3 տարեկան երեխաների վարգացման հաստատված ցուցիչների վերաբերյալ (Ոիխստը և այլք, 2019). դրանք կարող են օգտագործվել այն ուսումնասիրություններում, որոնց նպատակն է կապեր գտնել կլիմայի փոփոխության հետ կապված քաղաքականության, միջանկյալ ռիսկերի և այլ միջամտությունների միջև:
- 2 Կատարել քարտեզագրում և, փաստերի վրա հիմնվելով, հասակեցնել վաղ մանկության վարգացման և կլիմայի փոփոխության դեմք ձեռնարկվող գործողությունների միջև եղած կապերը: Արդյունքում կստեղծվեն թեմային առնչվող պատմություններ, կպարզաբանվեն անհրաժեշտ գործողությունները և ուսումնասիրությունների հնարավոր թեմաները:
- 3 Մշակել հստակ մէխանիզմներ, որպեսի ընակչությունը և շահագրգիռ կողմերը շարունակաբար տեղեկացված լինեն այս փաստերի մասին: Օրինակ՝ օժանդակել տեղեկությունների հավաքմանը, համատեքստին հասոու Վերլուծությունների մշակմանը և հաշվետվողականությանը, ինչպես նաև օգտագործել ստացված արդյունքները ոլորտում քաղաքականության մշակման և դրան համապատասխան գործողությունների հրականացման համար: Ծրագրի հրականացման ընթացքում ուսումնասիրելու և փորձարկման համար կարող են օգտագործվել համայնքում գործող լաբորատորիաները:

Եթե ստեղծվեն համագործակցային խմբեր, որտեղ ներգրավված կլինեն մարդիկ, ովքեր վրանվում են և վաղ մանկության վարգացման, և կլիմայական փոփոխությունների հետևանքների մեղմացման հարցերով, դրանք կսպասառեն վերը նշված աշխատանքների ակտիվացմանը և դրանց մասին տեղեկությունների տարածմանը: Սա հասկապես տեղին կլինի մեր ժամանակներում, եթե աշխարհը ընարկում է տնտեսության հետհամաճարակային վերականգնման հնարավորությունները (Աստաղի, 2020թ.): Վաղ մանկության վարգացումը խթանող տնտեսական մոդելների վերաբերյալ ընարկումներն ավելի հիմնավորված կլինեն, եթե հստակ փաստեր լինեն վաղ մանկության վարգացման և կայուն կլիմայի վերաբերյալ կայուն քաղաքականության կապերի վերաբերյալ:

Գույք այս հոդվածը սոցանց earlychildhoodmatters.online/2020-29

Հղումներ

- Attali, J. (2020, online). Altruists by Choice or by Force. Jacques Attali [blog]. Available at: <http://www.attali.com/en/geopolitics/altruists-by-choice-or-by-force/> (accessed July 2020).
- Brown, C., de Lannoy, A., McCracken, D., Gill, T., Grant, M., Wright, H. and Williams, S. (2019). Special issue: child-friendly cities. *Cities & Health* 3(1–2): 1–7.
- Clark, H., Coll-Seck, A.M., Banerjee, A., Peterson, S., Dalglish, S.L., Ameratunga, S. et al. (2020). A future for the world's children? A WHO-UNICEF-Lancet Commission. *The Lancet* 395(10224): 605–58. Available at: [https://www.thelancet.com/journals/lancet/article/P11S0140-6736\(19\)32540-1/fulltext](https://www.thelancet.com/journals/lancet/article/P11S0140-6736(19)32540-1/fulltext) (accessed July 2020).
- Collins, M., Knutti, R., Arblaster, J., Dufresne, J.-L., Fichefet, T., Friedlingstein, P. et al. (2013). Long-term climate change: projections, commitments and irreversibility. In: Stocker, T.F., Qin, D., Plattner, G.-K., Tignor, M., Allen, S.K., Boschung, J., Nauels, A. et al. (eds) *Climate Change 2013: The Physical Science Basis*. Cambridge and New York: Cambridge University Press. Available at: https://www.ipcc.ch/site/assets/uploads/2018/02/WG1AR5_Chapter12_FINAL.pdf (accessed July 2020).
- Costello, A., Abbas, M., Allen, A., Ball, S., Bell, S., Bellamy, R. et al. (2009). Managing the health effects of climate change: Lancet and University College London Institute for Global Health Commission. *The Lancet* 373(9676): 1693–1733.
- Office of the United Nations High Commissioner for Human Rights. (2018). *Report of the Special Rapporteur on the Issue of Human Rights Obligations Relating to the Enjoyment of a Safe, Clean, Healthy and Sustainable Environment*, A/HRC/37/58. Geneva: OHCHR.
- Richter, L., Black, M., Britto, P., Daemans, B., Desmond, C., Deverccelli, A. et al. (2019). Early childhood development: an imperative for action and measurement at scale. *BMJ Global Health* 4: i154–60.
- Smith, K.R., Woodward, A., Campbell-Lendrum, D., Chadee, D.D., Honda, Y., Liu, Q. et al. (2014). Human health: impacts, adaptation, and co-benefits. In: Field, C.B., Barros, V.R., Dokken, D.J., Mach, K.J., Mastrandrea, M.D., Bilir, T.E. et al. (eds) *Climate Change 2014: Impacts, Adaptation, and Vulnerability*. Cambridge and New York: Cambridge University Press. Available at: <https://www.ipcc.ch/report/ar5/wg2/human-health-impacts-adaptation-and-co-benefits/> (accessed July 2020).
- Watts, N., Adger, W.N., Ayeb-Karlsson, S., Bai, Y., Byass, P., Campbell-Lendrum, D.C. et al. (2017). The Lancet Countdown: tracking progress on health and climate change. *The Lancet* 389(10074): 1151–64.
- World Health Organization. (2011). *Health in the Green Economy: Health Co-benefits of Climate Change Mitigation – Housing Sector*. Geneva: WHO. Available at: <https://www.who.int/publications/i/item/health-in-the-green-economy-health-co-benefits-of-climate-change-mitigation-housing-sector> (accessed July 2020).
- World Health Organization. (2012). *Health in the Green Economy: Health Co-benefits of Climate Change Mitigation – Transport Sector*. Geneva: WHO. Available at: <https://www.who.int/publications/i/item/health-in-the-green-economy-health-co-benefits-of-climate-change-mitigation-transport-sector> (accessed July 2020).

«Վաղ մանկության կրթության խնդիրները» ամսագրում տպագրված «Կլիմայական փոփոխությունները և վաղ մանկության վարգացումը. գտնել լավագույն համադրությունը» հոդվածի հայերեն հրատարակումը իրականացվել է Բեռնար վան Լիր Հիմնադրամի և «Քայլ առ քայլ միջազգային ընկերակցության» (ՄԸ) գործընկերային նախաձեռնությամբ և համագործակցելով «Քայլ առ քայլ ՄԸ» անդամ Հայաստանի «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ:

